

Ընկալ զաղօթս և զպաղատանս, և ծնողիդ քո ի սէր,
Կեանս ի կենացդ տուր Հայորդեաց և Հայրենեաց մեր աւեր,

Հաճեաց ընդ մեր իղձ և ընդ ուխտ, Էջ առ մեզ, ճգնաբերար,
Հար, խորտակեալ զատելութիւն, Տուր սէր սիրոյդ մաքրափայլ,
Չայն տուր, կոչեալ զվայրատեալս ի սուրբ փարօխ միութեան,
Զի ծագեսցի յերկնից կամար մեզ նոր Արփի փրկութեան:

Օ՜ն, և ընկալ զիմ երգ տկար, զոր երգեաց սիրտ վշտամեա
Յիւրն ի քնար յոգնատխուր պատեալ ի մութ և յստուեր,
Ընկալ, և զշիթ հեղ քոջ շնորհաց ի հոգի իմ մեղսամած:
Զի թէ դու յիս, ահա սուրբ յամենայնի եմ, Աստուած:

Յովսէփ Վարդապետ Փինաչեանց:

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԱՐՏԱՐՈՒԹԵԱՆ, ԱՐՀԵՍՏԻ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ:

(ԵՐԵՆԻՆԻ ԵՒ ՎԵՐՆԻՆԻ ԿԵՆՏՐՈՆԻՆԻ ԿՈՄԻՏԵՐԵՆԸ) .

1811 Լօնդօնում ընդունվումէ գաղափարն լուսաւորութիւնը,
Նոյնը Պարիզում 1815 ին:

1814 Կարլսրուհեում հիմնվումէ Ինժիներական դպրոց, որը
1825 փոխվումէ բազմաբուստեան դպրոցի:

1814 Հոգիի մամուլով առաջին անգամ տպվումէ «Տայմզ», Լօնդօնում:

1814 Նապօլէօնի անկմամբ վերջանում է ցամաքային արգելանքը. յետ վերջնական խաղաղութեան՝ վերակենդանանումէ երկրագործութիւնը, նաւագնացութիւնը և վաճառականութիւնը. բայց շուտով լինումէ զանազան ուղղութիւններով յետադիմութիւն ևս. դարձեալ ներմուծումն մաքսային զրութիւնը Եւրոպոյի զանազան երկրներում, որոյ առթիւ փոխադարձ հաղորդակցութիւն ու յարաբերութիւնը դժուարանումէ ծանր մաքսադրութեան ազգաւ:

1815 Հումֆրի Դաւին հնարումէ ապահովիչ լապտերը:

1815 Անգլիան վերցնումէ «կօրնրիլ» կոչուած հրամանագիրը, որով հացաբոյսերի ներս բերելը խստիւ արգելվումէր, քանի որ ցորենի մի որոշ չափը 80 շիլինգ արժէր. և փոխարէնը զրվումէ մի նոր արգելիչ կանոն, որով ներս բերած հացաբոյսերի վրայ զրվումէ մի այնպիսի մաքս, որ համապատասխան լինի հրապարակի գնին: Այս վերջինն էլ 1846 ին վերցուեց և ներս բերելը (հացատեսակների) ազատ եղաւ Անգլիայում:

1816. Բոկերիկեան հռչակաւոր եղած մեքենագործական արհեստանոցի հիմնարկութիւնը Սէրէնգում Լիւտիխի մօտ:
1816. Առաջին մեծագոյն թիւից գործած կամուրջը Անգլիայում:
1817. Գերմանական առաջին ճարտարահան դէսը Կասսելում:
1818. Դոկտոր Ստրուվէն Գրէզդէնում արհեստական հանքաժիւն ջրեր շինելու փորձառութիւնն է անում:
1818. Երկրաբանական հնարումն քորոց կամ գնդասեղ շինելու կերպը:
1818. Անգլիայում և հիւսիսային Ամերիկայում կատարելապէս կազմակերպում է շոգեշարժ նաւարկութիւնը:
1819. Քրանսիան կաշիմիրեան այծեր ընդունելուց զինի մեծ յառաջագիմութիւն է անում շալագործութեան մէջ. այնպէս որ իւր շալերը պակաս չեն Արեւելեաններէ:
1820. Ամերիկայի բամբակը փոխադրում է Ագիպտոս ևս:
1820. Ուսուցչապետ Օրշտէտը գտնում է որ մագնիսի սլաքը գալվանեան հոսանքով շրջվում է:
1820. Եւրոպայից դէպի Ամերիկայի Միացեալ — Նահանգները գաղթելը բարձր աստիճանի է հասնում:
1820. Անգլիացի Մակինտոյը և Յանկոկը հնարում են արարական խէժի խոռոչուրդով ջրախիտ հագուստներ պատրաստելը:
1820. Ռոթշիլդ եղբարք (Քրանկ ֆուրտում, Լոնդոնում, Պարիզում, Նէապոլում և Վիեննայում) հիմնում են Եւրոպական բանկային տուն, որի նմանը երբէք չէ եղած:
1822. Պիօնին հնարում էր Պրօնիսեան Ֆրէյնը կամ ուժաշափը (զինամեմար), մի գործիք, որով չափվում է ուժ գնութիւնը ջրանուի, շոգեշարժ մեքենայի և այլն:
1822. Եռանդուն Լեռնախուզութիւն Ուրալում. այն է՝ իրօք խոյզ ոսկու համար, ընդ նմին և 1824-ից սկսած սպիտակ ոսկի (սլաւին) և 1829-ից՝ բրդեանտ ևս:
1823. Շելլրեուլը (Chevreuil) գտնում է ճարպի երկու էական բաղադրիչները. այն է՝ ստէարին և իւղանիւթ (Olein) և գորանով համարվում է ստէարինի մոմը հնարողը:
1823. Բուխտինցը՝ մի մեքենագործ Շտրասբուրգում, հնարում է տանորդական շինուը, որն իսկոյն կիրառութեան մէջ է մտնում:
1825. Առաջին երկաթուղու լրագործումն. Գարլինգտօնից դէպի Ստոկ-տօն մարդիկ տանելու համար, Շոգեմեքենան այդ գծի վրայ սարքելու փորձառութիւնը:
1825. Մարշալը Լէէգսում (Յանգլիայ) վուշ մանեւու մեքենան է շինում իւր այժմեան կատարելութիւնով:
1825. Մանչեստերցի Ռօբերտը շինում է առաջին «Սելֆակտորը». ինքնին մանիշ գործիք, որ այժմ ամենայն մեծ մանաբաններում ընդունուած է:

1827. Կանոնաւոր ընթացք շոգեկառքի Հոգեւոր վրայ. նոյնը 1830 ից Բոմբայի և Զուէցի միջև:

1829. Անգլիացի ինժիներ Ստեֆընզօնը այժմեան շոգեշարժ մեքենան այլ հնարիչն է. Լիվերպուլ—Մանչեստերեան երկաթուղին քիչէր մնացել որ հասնի իւր կատարելութեան. դորա կառավարիչները տեխնիկներէց (արհեստագէտ) մի Յանձնաժողով կազմելով, յանձնեցին հետազոտելու թէ արդեօք երկաթուղիների համար անշարժ, թէ շարժից շոգեմեքենան՝ իրրեւ միջի զօրութիւն, օգտակար կլինի. Քննութեան արդիւնքը եղաւ յօգուտ վերջինն. Ուստի կառավարութիւնը վճռեց և հաստատեց շոգեկառք մօցնել գծերի վրայ. և 500 հատ Ստերլինգ վարձ նշանակեց այն Լոկօմօտիֆի համար, որը մի փորձողական գնացքում կը գերազանցէ միւսներին. Պայմաններն էին. — որ ծուխ չհանէ. իւր գոնէ եռապատիկ ծանրութիւնը քաշտայ մի արագութիւնով որ հաւասար լինի տասն անգլիական մղոնի. որ նա հանգչի զսպանակների վրայ, 15 ոտից բարձր չլինի և այլն. Ստեֆընզօնը երեք մրցողներէց տանումէ յաղթանակը. և ի հետեւումն սորա լինումէ:

1830. Կատարելագործումն Լիվերպուլ—Մանչեստերեան երկաթուղիի՝ շոգիի զօրութեամբ:

1830. Արագ և Դուլօնգը զիտութեանց ճեմարանի յանձնարութեամբ հետազոտումեն ջրաշոգիի առաձգականութիւնը թէ արհեստագիտութեան գործառնութեան մէջ որքան օգտակար լինել կարող է. և գորանով շոգիի ուղիղ գործածութեան մեծ ընթացք են տալիս:

1831. Բեեռ կամ գամ (մեխ) շինելու մեքենաներ՝ արդէն Հիւսիսային Ամերիկայում կային. Լօնդօնումն էլ են շինում:

1832. Գերմանական առաջին երկաթուղին լինումէ ձիաքարշ Բուլգոյսի և Լինցի միջև՝ աղ կրելը դիւրացնելու համար. իսկ առաջին շոգիովը՝ լինումէ 1835-ին Նիտընբերգից գէպի Ֆիւրթը:

1833. Ֆրանսիական առաջին երկաթուղին՝ Ստ. Էտիէնից գէպի Լիօն, կարեւոր Ստ. Էտիէնի և իւր շրջակայքի առատ քարածուխի բովերովը:

1833. Դրէյզէն շինումէ առաջին ասեղնաւոր հրացանը:


1833. Պենսիլվանիայում Աւստրիացիներ Հարէն առաջինն է գործ դնում Գալվանականութիւնը ժայռերը ճեղքելու համար:

1834. Գերմանական պետութիւններից շատերը կազմումեն Մաքսսայի միութիւն, մաքսսային հասարակաց գրութիւնով (սիստեմ)։

1836. Լայպցիգում կազմվումէ գերմանական գրաւաճառների ժողովարան կամ հրապարակ և Քիմնեցում էլ արհեստագիտական դպրոց է բացվում:

1837. Հոսայնհայլ ուսուցչապետը, Միւնխենում և Միորդերը նիւ-հոր-կում հնարում են ելեկտրօմագնիսական հեռագրատի-պը: Առաջինը մատուցած է այն ծառայութիւնը, որ իւր բաղմամբիւ փորձառութիւններով և միշտը կարեւոր գործնական գիտողու-թիւններով և առաջարկութիւններով, այսօրուայ հեռագրութեան հիմունքն է սահմանել, ան ինչ երկրորդը՝ Միորդերը՝ շինելով մի պարզ և գործնական յարմարւոր գործիք և յուշարար դրութիւնը (սիգնալ սիստեմ), որը հետզհետեւ մեծ տարածու-թիւն է գտնում, այդու անուրանալի է կացուցել իւր հանճարը:
1837. Փրանկիս Սմիթը Լօնդօնում Արքիմիդեան Պատեւակը գործէ զնում իբրեւ մղիզ գործի շոգնաւի համար:
1838. Անգլիան բացումէ Եւրոպայի և Հիւսիսային Ամերիկայի միջև յաշնկոյս Ատլանտեան նաւագնացութիւնը:
1838. Փրանսիացի Պագուերըը հնարումէ, իւր անունով տնուած, Դագուէրատիպը, այսինքն՝ մի արհեստ՝ քիմիապէս նախա-պատրաստած մետաղեայ տախտակի վրայ պատկերներ հանելու և ամրացնելու լոկ լուսոյ ազդեցութիւնով:
1838. Յակոբին Պետերբուրգումը հնարումէ Գալվանօպլաստիկը, մի հնարը, որով կարելի է լինում մի մետաղական լուծվածքի տակնարկով (նեղորշլագ) զրամների կամ որ և է մետաղի վրայի պատկերի և ուրիշ փորուածքի նմանը վեր առնել:
1840. Հարաւային Ամերիկայի արեւմտեան ծայրի մօտ եղած կղզիներից Գուանօ ասուած աղբի առ և տուն է սկսվում. դա թուշու-նների ծիրտն է, որ երկիրը պարարտացնելու մի գորեղ նիւթ է:
1841. Միացեալ — նահանգներում նոր մաքսային օրէնք է դր-վում. որոյ զօրութեամբ օտար արգիւտգործութիւնները ներս ընդունելու համար պետք է իրանց արժէքի 20 տոկոսը մարս տան:
1844. Առաջին ելեկտրօմագնիսական հեռագրութեւնը Վա. շինդտունից դէպի Բալտիմօրը՝ ըստ Մօրզէի դրութեան:
1844. Անգլիայում հնարումեն տառաձուլմիքեն ան, ձուլարան:
1847. Սուէզի պարանոցը պատուելու նախագիծն է առաջարկ-վում:
1847. Առաջին երկամուղին Չուիցերիայում, Յիւրիիից դէպի Բագէն:
1848. Ըստ դրութեան Ռօբերթ Ստեֆընզօնի՝ առաջին մեծագոյն խող-վակակերտ կամուրջի ձգումն Վալլէսի արեւմտեան եղելքի մօտ Կօնֆէյի-ճոցի վերայ:
1848. Կալիֆօրնիայի Ոսկու հարստութիւնն են դառնում:
1848. Փրանսիական հասարակապետական Պառաժարութեան անդամ Լուի-բլան գիտաւորութիւն է ունենում Գաղղիայում Ազգա-յին գործատեղիներ հիմնելու արհեստաւորներին և գոր-ծուորներին պաշտպանելու և լաւ վարձագրելու մտքը:

1850. Աւարտ առաջին ստործովեայ հեռագրաթելի Գոֆերի
և Կալէյի միջև:
1850. Զուիցերեան ընդունումէ Ֆրանսիական գրամակշիւրը (նը-
մանը ըստ ձեռքի և հաւասարը ըստ արժէից):
1850. Աւստրալիայում, մանաւանդ Մելբուրնէումը գտնուին ոսկու
հարուստ բովեր:
1851. Լոնդոնում լինումէ համաշխարհան դէս ապակեայ
ապարանում:
1851. Զինդերը շինումէ առաջին յարմարաւոր կարելում եքենան:
1852. Հնացած ասուէղէն կտորներից առաջին անգամ պատրաստու-
մին արհեստական բուրդ:
1852. Պետնկոֆերը Միւնխէնում հնարք է գտնում փայտից վա-
ռելագազ պատրաստել մեծ քանակութեամբ:
1852. Միացեալ-նահանգներից գիտնական նպատակով մի նաւորդու-
թիւն է լինում գէպի Ճապոնեայ, որով շատ նաւահանգիստներ
յայտ գալով, հասարակաց յարաբերութիւն է կայանում:
1853. Առաջին փորձն են անում Լոնդոնը ելեկտրական լուսով
լուսաւորելու:
1853. Մաքս և տուր և առի դաշնագրութիւն Աւստրիայի և միւս
Գերմանական Մաքսային միութեան միջև, ապա վա-
ճառական դաշինք Պրուսիոյ և միացեալ-նահանգաց միջև. յետոյ
Տօսկանեայի և Ֆրանսիայի միջև:
1853. Աշխարհան դէս արհեստից ի նիւ-եօրկ:
1853. Առաջին ելեքտրոմագնիսական ժամացոյց Բրուսիլի
քաղաքային խորհրդատան վրայ:
1854. Անգլիական Պարլամենտը մի օրէնք է հրատարակում, որով Լոն-
դոնում շոգիով գործարան ունեցողները պարտաւորվում են իրանց
գործարանները շինել ծուխ ոչնչացնող գործիքներով:
Այս օրինակին հետեւց Պարիզը և ուրիշ շատ քաղաքներ ևս, սա-
կայն հետեանքը մեծ չէր: Ըստ որում ծուխն՝ աւելի վառողների
ճարպիկութիւնով, քան թէ մեքենական գործիքներով, կարողէ
ոչնչանալ:
1854. Յիւրիսում հիմնվումէ դաշնակիցների բաղմարհեստեան
Դպրոցը:
1855. Հանգէս արհեստների և ճարտարութեան Պարիզում:
1856. Հիսիսային Ամերիկայում գտնուին մեծ քանակութիւնով նաւթ:
1856. Բեսսեմերը հրապարակումէ իւր փորձառութիւնը, որով հողաեր-
կամը և պողպատը հում հալած երկաթից՝ առանց գործ գնելու
այրելի նիւթ շինել է կարողանում:
1856. Վաճառականական կապակցութիւն Ֆրանսիայի և Անգլիայի մի-
ջև, տուր և առական մեծ ազատութեան վրայ հիմնուած:



1862. Համաշխարհահանդես Լոնդոնում:

1865. Նոր պայմանակցութիւն վաճառականութեան Փրանսիայի և Զուլցերիայի միջև:

1867. Պարիզի հռչակաւոր Համաշխարհահանդեսը:

(Թ-բ-հ.) Ս. Բէկ - Նազարեանց:

ԽՏԻՆՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՐԿԱՅԻՆ ԱՄՈՒՐՈՒՄ:

Ահա մի նոր 11 տող բեւեռաձև արձանագրութիւն ևս՝ որ միջոցաւ Գէորգ վարժապետի Տէր Թարութիւնեան Դիլիջանցւոյ՝ ձեռք բերի Շիրակայ գաւառի Աուլի-ջան անունով Հայարնակ դիւղի հարաւային կողմի վտակի եզերքումն, զոր տալով Խմբագրութեանդ խնդրեմ տպագրութեամբ հրատարակել հնախուզից հետաքրքրութեան համար:

Եւսկում թէ՛ այս բեւեռագրոյ օրինակն ևս ուղարկած լինելով Հայազգի հնագէտ Պրաֆէսսոր Պ. Քերովրէ պատկանեանին՝ ստացայ նորանից թարգմանութիւնն որպէս այս բեւեռագրոց, նոյնպէս և Օրդակլուայ մօտ եղած 9 տող բեւեռագրոց *) թարգմանութիւնն միևնոյն նամակի մէջ, որոյ օրինակն ևս ահա տամ խմբագրութեանդ ի տպագրութիւն պատմաբանից բաւականութեան համար:

Պ. Ք. Պատկանեանի նամակի պատճէնն այս է.

« 2երդ Սրբազնութիւն ևլն.

« Ստացայ 2եր Դեկտ. 1ին գրած նամակը և հետը Աուլի-ջանի 11 տող արձանագրութեան օրինակը, Հատ դժուարութեամբ՝ բացի 3 տողից, կարողացայ կարգալ, և ահա ուղարկում եմ 2եղ թարգմանութիւնը եթէ հաճելի է. » Այս է.

« Բաղմազաւակ Աստուծոյ՝ Խալիլեայ,

Արքայն Արգիստիս ասէ.

Առի զգաւառն քաղաքին Ալէխու (?)

Գնացի ի քաղաքէն Իստիմանու

Ի գաւառն Սաբապտին՝ Յունի իշխանին.

(Որ այժմ է)

(զժուարիմանալի ևն դժագրութիւնքն)

Արգիստիսի արքայի, հզօր արքայի, արքայի

Աշխարհին Բիայնայ, բնակելոյն ի քաղաքին

Տուսպայ » :

« Այս է ահա գորա թարգմանութիւնը, ի հարկէ մերձաւորարար ճիշտ կարգալը և թարգմանելը միայն այն ժամանակ կլինի, երբ նիւթը աւելանայ, այսինքն՝ նոր և բաղմատող արձանագրութիւններ գտնվեն առատութեամբ » :

« Իսկ Օրդակլուինի թարգմանութիւնը այս է.

« Մերձեցայ հզօր զօրութեան Աստուծոյն Խալիլեայ,

(*) Օրդակլուայ 9 տող բեւեռագիրն տպած է Արտատ ամսագրի 1883 թուի Գեկտ. ամսում, յերես 534: